ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ԲԱԺՆԻ ԿՈՂՄԻՑ 2015Թ.-Ի ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Վայոց ձորի մարզպետարանի ներքին աուդիտի 2015թ.-ի տարեկան ծրագրի շրջանակներում ներքին աուդիտի բաժնի կողմից նախատեսվել և իրականացվել է 43 միավոր աուդիտ, որից 22 միավոր մարզային ենթակայության Հանրակրթական ՊՈԱԿ-ներում, 8 միավոր մարզային ենթակայության առողջապահական ՓԲԸ-ներում, 9 միավոր մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումներում և 4 միավոր մարզպետարանի գնումների գործընթաց: ՊՈԱԿ-ներում, ՓԲԸ-ներում իրականացվել է ֆինանսական աուդիտ, մարզպետարանի աշխատակազմում՝ գնումների գործընթացի գնումների օրենսդրությանը համապատասխանության աուդիտ և ստորաբաժանումների գործունեության ոլորտը կարգավորող օրենքներին և այլ իրավական ակտերին համապատասխանության աուդիտ: Նշված ՊՈԱԿ-ներում ՓԲԸ-ներում և մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումներում, գնումների գործընթացի աուդիտի ստանդարտների համաձայն, այդ թվում բավարար տեղեկությունների փաստաթղթային ստացման հիման վրա, փաստացի իրականացվել է աուդիտ և կազմվել աուդիտի հաշվետվություն: Հաշվետվությունները ներառել են աուդիտի ընդհանուր նկարագիրը, գտնվելու վայրը, գործունեության իրավական հիմքերը, գործունեության շրջանակները, խնդիրները, աուդիտի արդյունքները, եզրահանգումները, առաջարկությունները, հանձնարարականները: Իրականացվել են ֆինանսական հաշվետվություններում, ֆինանսական բնույթի տեղեկություններում արտահայտված տվյալների արժանահավատության գնահատում, ֆինանսական գործառույթների առանձին տեսակների օրինականության ստուգում, հաշվապահական հաշվառման գրանցումներում արտացոլված տվյալների արժանահավատության գնահատում: Աուդիտի ընթացքում աուդիտի են ենթարկվել ֆինանսական կառավարմանը, ներքին հսկողությանը, գործունեության իրավական ակտերին համապատասխանությանն առնչվող բոլոր գործառույթները: Հրավիրվել է Ներքին աուդիտի կոմիտեի 10 նիստ, քննարկվել են աուդիտի հաշվետվությունները, կայացվել համապատասխան որոշումներ: Աուդիտի ենթարկված ՊՈԱԿ-ների, առողջապահական ՓԲԸ-ների և մարզպետարանի համապատասխան ստորաբաժանման ղեկավարներին տրվել են հանձնարարականներ, ներկայացվել առաջարկություններ արձանագրված թերությունների և խախտումների վերացման ուղղությամբ: Միաժամանակ այդ ուղղությամբ ներքին աուդիտի բաժնի կողմից իրականացվել է խորհրդատվություն և վերահսկողության գործընթաց:

Աուդիտի հաշվետվությունները տեղադրվել են Վայոց ձորի մարզպետարանի vdzor.gov.am պաշտոնական կայքում, ստուգումների արդյունքներ բաժնում:

Ներքին աուդիտի բաժնի կողմից ամբողջությամբ կատարվել է 2015 թ.-ի ներքին աուդիտի տարեկան ծրագիրը:

Հաշվետվությունները, համաձայն ՀՀ ֆինանսների նախարարի 17.02.2012թ.-ի թիվ 143-Ն հրամանի, ծրագրային մուտքագրմամբ ներկայացվել են ՀՀ ֆինանսների նախարարություն:

Ներքին աուդիտի բաժնի պետ՝ Վ. Կարապետյան